



*Կալիֆորնիայի հաշմանդամների պահպանության և իրավունքների
պաշտպանության համակարգ
Անվճար հեռախոսահամար՝ (800) 776-5746*

Տարեցներին տրամադրվող ծառայությունների բազմանպատակային ծրագիրը կարող է լինել տարեցների խնամքի կենտրոն գնալու փոխարեն տանը մնալու հարցի պատասխանը

Ապրիլ 2016թ., Հր. #5395.10

Ի՞նչ է Տարեցների ծառայությունների բազմանպատակային ծրագիրը (Multipurpose Senior Services Program - MSSP):

MSSP-ն տրամադրում է ծառայություններ և աջակցություն՝ օգնելու Ձեզ
մնալ տանը որքան հնարավոր է երկար: Նպատակն է՝ կանխել
տարեցների խնամքի կենտրոնում Ձեր տեղավորումը: Սա Medi-Cal
ծրագրի տնային և համայնքային հրաժարական է, որը Ձեզ կարող է
տրամադրել լրացուցիչ աղբյուրներ՝ Ձեզ Ձեր սեփական տանը
պահելու հարցում օգնելու համար:

Եթե Դուք ամուսնացած եք և չեք համապատասխանում Medi-Cal
ծրագրին չափից շատ միջոցների և/կամ չափից մեծ եկամտի
պատճառով, Դուք կարող եք այդուհանդերձ համապատասխանել
MSSP ծրագրին:

Ո՞վ է համապատասխանում MSSP-ի ծառայություններին:

Համապատասխանելու համար Դուք պետք է.

- լինեք առնվազն 65 տարեկան,
- լինեք անկարողություն ունեցող անձ, ով տարեցների խնամքի կենտրոնում վտանգի տակ կլինի: Որոշելու համար, արդյո՞ք Դուք համապատասխանում եք MSSP-ին, Ձեր վիճակը կգնահատվի բուժքրոջ կողմից,
- ներկայումս համապատասխանում եք Medi-Cal ծրագրին և չեք ստանում ծառայություններ մեկ այլ տնային և համայնքային հրաժարականի ծրագրով: Եթե Դուք ներկայումս գտնվում եք հիվանդանոցում կամ որևէ խնամքի կենտրոնում և ցանկանում եք դուրս գրվել, կան հատուկ կանոններ, որոնք հաշվի չառնելով Ձեր ամուսնու եկամուտն ու միջոցները՝ հեշտացնում են Ձեր համապատասխանության գործընթացը: Եթե Դուք չեք համապատասխանում Medi-Cal ծրագրին միջոցների կամ ամուսնու եկամտի պատճառով կամ Դուք կցանկանայիք կիսել ծախսերը, ստորև կարդացեք անցումային շրջանի ծառայությունների վճարման պայմանները:
- բնակվում եք այնպիսի շրջանում, որն ունի այս ծրագիրը - այս ծրագիրն ունեցող շրջանների թարմ ցանկը տե՛ս Հավելված B-ում:

Ի՞նչ տեսակի ծառայություններ են առաջարկվում:

Առաջարկվող ծառայություններն են.

- տարեցների կենտրոնի ծրագրեր
- գումարի տնօրինման օգնություն և խորհրդատվություն
- կլինիկական դեպքի կառավարում - սովորաբար իրականացնում է բուժքույրը և սոցիալական աշխատակիցը, ովքեր՝
- գնահատում են Ձեր առողջական ու այլ կարիքները

Էջ 3՝ 7-ից

- մշակում են խնամքի ծրագիր՝ այդ կարիքների բավարարման համար
- ապահովում են անհրաժեշտ ծառայությունների տրամադրումը
- հետևում են Ձեր ինքնազգացողությանը
- տրամադրում են իրավունքների պաշտպանության ծառայություններ
- տեղեկատվություն և ուղղորդում
- ժամկետային խնամք - կարճաժամկետ խնամք մեկ այլ անձի կողմից, ով փոխարինում է Ձեզ խնամող անձին, եթե նրան անհրաժեշտ է բացակայել կարճ ժամանակով
- Օժանդակություն տնային պայմաններում, ինչը ներառում է՝
- ֆիզիկական ադապտացիաներ
- օժանդակող սարքեր
- անհետաձգելի օժանդակություն տեղափոխման ժամանակ
- ժամանակավոր կացարանի ծախսեր որոշ հանգամանքներում
- օժանդակություն կոմունալ ծառայությունները վերականգնելու հարցում
- կենցաղային սարքերի, օր. գազօջախի, սառնարանի կամ մահճակալի վերանորոգում կամ փոխանակում
- իրավական ծառայություններ
- տնային անվտանգությունն ապահովող փոքր վերանորոգումներ
- տեղափոխում
- ուղեկցում բժշկի մոտ
- ամոքիչ զրույց հեռախոսով
- անվճար այցելություն տուն
- ֆիզիկական և հոգեբանական առողջության վիճակի գնահատումներ
- կերակրման ծառայություններ
- առողջապահական խնամք տնային պայմաններում
- կանխարգելիչ առողջապահական խնամք

Էջ 4՝ 7-ից

- տնային աշխատողի ծառայություններ
- սննդի պատրաստում տանը կամ որևէ վայրում
- տարեցների ցերեկային խնամք՝ ներառյալ տարեցների ցերեկային առողջապահական խնամքը
- անձնական հիգիենայի խնամքի օժանդակություն՝ հիգիենայի, անձնական անվտանգության պահպանման և առօրյա ապրելակերպի գործողություններն ապահովելու համար
- պաշտպանիչ հսկողություն - այն անձանց 24-ժամյա հսկողությունը, ովքեր ծանր հիվանդ են կամ կարող են գտնվել արտակարգ բժշկական իրավիճակում
- հաղորդակցման ծառայություններ - գրավոր և բանավոր թարգմանություն և անհետաձգելի արձագանքման համակարգի ապահովում
- սարքավորումների ձեռքբերում

MSSP ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄ

Եթե Ձեզ մոտ առաջացել են ծախսեր որևէ հաստատությունում ծառայություններ ստանալու համար, որոնք օգնել են Ձեզ վերադառնալ տուն, և Դուք այդ ծառայություններն ստանալու պահին չեք համապատասխանել Medi-Cal ծրագրին կամ կիսել եք ծախսերը, Medi-Cal-ը կվճարի այդ ծառայությունների համար, եթե դրանք մատուցվել են տվյալ հաստատությունում անցկացնելու վերջին վեց ամիսների ընթացքում:

Ծառայությունները, որոնց համար վճարում է Medi-Cal-ը, կոչվում են "անցումային շրջանի ծառայություններ", որոնք օգնում են Ձեզ դուրս գալու որևէ հաստատությունից: Ծառայությունները ներառում են աշխատանքային թերապիան, ֆիզիոթերապիան և այլ վերականգնողական ծառայությունները, ճարտարապետական փոփոխություններ Ձեր տանը և կլինիկական դեպքի կառավարում

Էջ 5` 7-ից

հաստատությունում գտնվելու ընթացքում՝ օգնելու Ձեզ դուրս գալ այդտեղից:

Եթե Դուք ամուսնացած եք և վերադառնում եք տուն ամուսնու մոտ կամ արդեն ապրում եք տանը Ձեր ամուսնու հետ, գործում են ռեսուրսների և եկամտի հետ կապված հատուկ կանոններ, որոնք կարող են հեշտացնել Ձեր համապատասխանելու հնարավորությունը:

Ես պե՞տք է վճարեմ այս ծառայություններն ստանալու համար:

Ոչ, Ձեր կողմից վճարվող գումարներ չկան:

Ես կարո՞ղ եմ ստանալ MSSP, եթե ես ստանում եմ ներտնային օժանդակության ծառայություններ (In-Home Support Services - IHSS)

Այո: Դուք կարող եք ստանալ երկուսը:

IHSS-ով ինձ տրամադրվող ծառայությունները կկրճատվե՞ն, եթե ես ստանամ MSSP:

Եթե Դուք ներկայումս ստանում եք առավելագույն քանակով IHSS-ի ժամեր, դրանք չեն կարող կրճատվել, եթե Դուք ստանաք տնային օգնություն MSSP-ի միջոցով:

Եթե Դուք չեք ստանում առավելագույն քանակով IHSS-ի ժամեր, MSSP-ի միջոցով Ձեզ առաջարկվող ցանկացած տիպի տնային օգնությունը չի ազդի Ձեր IHSS-ի ժամերի վրա:

Ի՞նչպես պետք է դիմեմ:

Տե՛ս այս տեղեկատու թերթիկի վերջում զետեղված ցանկը: Գտեք Ձեր շրջանը և զանգահարեք նշված հեռախոսահամարով: Ասացեք "Ես կարծում եմ, ես ունեմ MSSP-ի ծառայությունների կարիքը": Դուք

Էջ 6` 7-ից

կարող եք զանգահարել նաև 1-800-510-2020 հեռախոսահամարով Ձեր տեղական Ծերերի հարցերով զբաղվող շրջանային գործակալությանը (Area Agency on Aging - AAA):

Ի՞նչ կարող եմ անել, եթե ես մերժվել եմ MSSP-ի համար:

Դուք կարող եք բողոքարկել և դիմել լսումների անցկացման համար: Բացի այդ, Դուք իրավունք ունեք ստանալ գրավոր բացատրություն այն մասին, թե ինչու եմ Ձեզ մերժել MSSP-ից օգտվելու համար: Գրավոր բացատրությամբ Ձեզ կներկայացվի, թե ինչ կարող եք անել բողոքարկման համար: Աջակցություն ստանալու համար կարող եք զանգահարել Կալիֆոռնիայի հաշմանդամների իրավունքների պաշտպանության կենտրոն:

Ի՞նչպես կարող եմ ստանալ մանրամասն տեղեկատվություն MSSP-ի մասին:

Եթե ունեք ինտերնետային կապ, տեղեկացեք այս կայքէջում.

<http://www.aging.ca.gov/programsproviders/mssp/>

Եթե ես չեմ համապատասխանում MSSP-ի համար, կան արդյո՞ք այլ ծրագրեր, որոնք կարող են օգնել ինձ:

Զանգահարեք Ծերերի հարցերով զբաղվող շրջանային Ձեր գործակալություն (AAA) տեղեկատվության և Ձեր համայնքում ուղղորդման ծառայություններին տեղեկանալու համար: Ձեզ ամենամոտ AAA գործակալության գրասենյակի հեռախոսահամարն իմանալու համար զանգահարեք. 1 800 510-2020

Տարեցներին տրամադրվող ծառայությունների բազմանպատակային ծրագրի կոնտակտներ (ըստ շրջանի) նաև այստեղ –

<http://www.aging.ca.gov/ProgramsProviders/MSSP/Contacts/>

Էջ 7` 7-ից

Մենք ցանկանում եք լսել Ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցման հարցերին և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում:
<https://docs.google.com/forms/d/1d6ezTl2M5UMAWU66exLbc1SQ9wDPzvtuS3AGR4-cgwE/viewform?c=0&w=1>

Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքներով զբաղվող կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս
<http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>: